

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԻՐԻԿՈՒԱՆ ԱՂՕԹՔ**

Այս ծառերուն տակ, ուր հոգիս
 Ծնրադրութեան կը տանի զիս,
 Ամէն իրիկուն, երկինք մ'անհուն,
 Անոնց կանաչ կատարներուն

Կ'իջնէ վերէն աստղածորան,
 Աղօթակերտ իբրեւ խորան,
 Որուն առջեւ ես լըռամած՝
 Զերթ խուզարկու մը երկնայած,

Աստղերէն վեր, պայծառ, անամպ,
 Քեզ կ'որոնեմ հանդարտութեամբ,
 Մինչ Դուն՝ առ մեզ իջեւանիլ
 Բարձունքներէդ վար կու գաս բիլ:

Հուսախորհուրդ գիշերներուդ,
 Աստղահիւս, պայծառ ու լուրթ,
 Ու ծառերուն երկնանրէր,
 Պաշտող քուրմը ըրէ զիս, Տէ՛ր,

Եւ տո՛ւր ինծի, որ վեհագոյն
 Աղօթական սուրբի մ'հանգոյն,
 Վերընծայեմ Քեզ պատարագ,
 Սիրտըս այդ ջինջ կապոյտին տակ:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Զամ-Թաղ, 25 Մայիս, 1908)